Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բժշկական սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հուլիսի 26-ին կնքված N «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» պայմանագրում 2018 թվականի օգոստոսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: *մատակարարման ժամկետի երկարաձգում*

Փոփոխության նկարագրություն: *գնման ժամանակացույցի վերահաստատում*

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ*

Պատվիրատու՝ *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

26.07.2018թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «22» «օգոստոսի» 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (Այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և և «Մեդսերվիս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Հ.Չափարյանի (Այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.07.2018թ. կնքված N «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 7.6-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» գնման պայմանագրի շրջանակներում պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով՝ մինչև սույն թվականի սեպտեմբերի 24-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԾՁԲ-2018/11-ԵՊԲՀ» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Մեդսերվիս» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, մ.Արարատ, գ.Այգեստան, Խանջյան 88
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	հ/հ 2050422295131001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 04228699
Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ medservice.am@gmail.com
	Հեռ. (098) 56 52 41
	Տնօրենի ժ/պ՝ Հ.Չափարյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ